

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՄԻՒՆՈՒՄ

1985 թվականից Միլանում կազմակերպվել և գործում է ՕԷՄԵ (OEMME Edizioni) հրատարակչությունը, որն իր գործունեությունը ծավալել է ուրույն մշակույթների, մասնավորապես Միշին արևելքի ժողովուրդների անցյալի և ժամանակակից մշակութային արժեքների (արվեստ, գրականություն, պատմություն) պոպուլյարիզացիայի, բնագավառում Հրատարակչության հիմնադիր անդամներն են Սեդրակ Մանուկյանը (նախագահ), Հերման Վահրամյանը (քարտուղար) և Հակոբիկ Մանուկյանը (գանձապահ)։ Հրատարակչության կազմակերպման հիմնական շարժառիթներն են եղել մի կողմից ինքնուրույն մշակութային նպատակաուղղվածություն ունեցող հրատարակչության պակասը (այնպիսի հրատարակչության, որը տպագրում է ինքնատիպ և ոչ ներմուծված մշակույթներին նվիրված գործեր)՝ Միշին արևելքի երկրներում և մասնավորապես Բուխարայում, ինչպես և այն, որ այդ բնույթի հրատարակչությունները մինչև այդ հայտնվել են պատահականորեն և հեռու՝ հրատարակչական բավարար մակարդակից։ Իր երկու և կես տարվա գործունեության ընթացքում հրատարակչությունը առաջնորդվել է հետևյալ մշակված սկզբունքներով.

ա) ձգտել հասնելու հայ այն մտավորականության համագործակցությանը, որը թեև ի վիճակի է սեփական ներդրումներն անելու հայ մշակույթի ուսումնասիրության բնագավառում, սակայն հակված է այլ ուղղությունում դրսևորելու իր հետազոտական ունակությունները,

բ) ապահովել այն ոչ հայ մտավորականների աշխատակցությունը, որոնք ի վիճակի են զբաղվելու ոչ եվրոպական մշակույթների ուսումնասիրությամբ,

գ) հրատարակել միայն այն գործերը, որոնք կոմունիստական և միջազգային արդյունքների առնվազն միջին մակարդակը և ինքնուրույն բովանդակություն,

դ) հրատարակել մշակութային արժեքավորման տեսանկյունից հիմնավորված, հասարակական-քաղաքական իմաստով անկողմնակալ ու անաչառ աշխատություններ,

ե) հրատարակչությունը իրեն է վերապահում միայն հրատարակվելիք գործերի որակի վերահսկողությունը և չի միջամտում տեսանկյունների ու գաղափարական կողմնորոշումներին՝ ինչ բնագավառում էլ որ լինի։ Ենթադրվում է

անգամ նույն մատենաշարում իրար հակասող կամ հակադիր տեսակետների ու մեկնաբանությունների առկայություն,

զ) ընդգծել ուրույն մշակույթների առանձնահատկությունները՝ այդ համարելով հետազոտությունների հիմնական ուղղությունը։ Ընդ որում, հրատարակչությունը իրեն ելակետ է ընդունում գաղափարական, պատմական, մշակութային և գեղագիտական տեսակետների ու հայացքային ազատությունը,

է) հրատարակչությունը հետամտում է հայ ինքնուրույն մշակույթի, հայերեն մշակութային արժեքները տարածելու նախ հայերի, ապա օտար և ուրույն մշակույթներ ունեցող հանրությունների մեջ,

ը) հրատարակչությունը իր գործունեության հատուկ բնագավառն է համարում իմաստասիրությունը, արվեստը, մշակույթը, երաժշտությունը, պատմությունը և հայագիտությունը.

Հրատարակչության արդյունքները լույս են տեսնում զանազան մատենաշարերով, որոնք կամ հրատարակվել են և կամ էլ հրատարակման գործընթացի մեջ են։ Այդ մատենաշարերը հետևյալներն են.

1. «Հայ հրատարակչության վավերագրեր» (18 հատոր)՝ Հակոբիկ Մանուկյանի և Արմեն Մանուկյանի պատասխանատու խմբագրությամբ, խաղերեն և անգլերեն՝ բնագրերով, հայերեն ամփոփումներով, չափազորումներով և գունավոր լուսանկարներով։ I և II հատորները լույս են տեսել երեք հրատարակչությամբ, իսկ հաջորդ հինգ հատորներն ունեցել են երկու հրատարակչություն։ 1988 թ. հուլիսից կսկսի լույս տեսնել նույն մատենաշարի առաջին 10 հատորների գերմաներեն հրատարակությունը։ Այդ մատենաշարից ծրագրված է հրատարակել «Աղթամար», «Ղարաբաղի վանքերը և հուշարձանները», Անիի, Շիրակի, Ատրպատականի, Վան-Վասպուրականի, Լոռու և Հյուսիսային Հայաստանի, Նախիջևանի, Սեանի ավազանի և Սյունիքի վանքերին ու եկեղեցիներին, ինչպես և պատմական Հայաստանի բերդերին ու ամրոցներին նվիրված թողարկումները (մեկնասանքների աշակերպության պայմաններում)։

Հրատարակվող այս մատենաշարից տպագրվել է 85.000 օրինակ, որից իրացվել է 55.000-ը։ 17 երկրների ոչ հայ պարբերականները 1067 անգամ թողարկումներին արձագան-

քնյ ևն գրախոսականներով և հոդվածներով՝ Մատենաշարը նպաստում է աշխարհասփյուռ հայության, նրա և Սովետական Հայաստանի ժողովրդի մշակութային փոխհարաբերությունների զարգացմանը: «Հայ ճարտարապետության վավերագրերի» հրատարակումը սփյուռքում կատարվող մշակութային աննախընթաց կոթողային աշխատանք է, որը նշանակալի ավանդ է ոչ միայն հայերի, այլև մյուս ժողովուրդների մեջ հայ ճարտարապետական արվեստի ճանաչման գործում և դրանով իսկ արդեն մտել է միջազգային մշակույթի ուղեծիր: Այդ մատենաշարը հայ ճարտարապետական մշակույթի ներկայացմամբ մանուրներ առաջ է դնել մեծ հետաքրքրություն, որով շատ ժողովուրդների ամենատարբեր խավերի՝ այցելել Հայաստան և մոտիկից ծանոթանալ հայ ճարտարապետական կոթողներին:

Այս մատենաշարից լույս են տեսել «Հաղպատ», «Խաչքար», «Սանահին», «Ս. Թադևի վանք», «Ամբերդ», «Գեղարդ», «Գեղամիջին», «Աղթամար», «Երևան», «Ս. Ստեփանոս Նախավկա», «Կեչառիս», «Անի», «Հաղպատ», «Ամուղու-Նորավանք», «Քասախի վանքեր», «Պողոթն-Արուճ», «Գանձասար», «Սևան» թողարկումները: Առաջիկայում լույս կտեսնեն «Ղարաբաղ» և «Սոհրուլ» (պարսկական Ատրպատականի հայ եկեղեցիներ) թողարկումները: Հրատարակության ևն պատրաստվում «Հառիճավանք», «Մակարավանք», «Տավուշի վանքեր», «Տաթև», «Երեմյանի վանքեր», «Վանի վանքեր», «Նոր Զուղայի վանքեր», «Էջմիածին և շրջակայք», «Խաչածե եկեղեցիներ», «Բերդեր և ամրոցներ» թողարկումները:

Այս մատենաշարը, ինչպես և հրատարակչական ցանկացած լուրջ գործ, պահանջում է մեծ ջանքերի ներդրում՝ հոգվածների գիտական բովանդակության, տեքստերի և գծագրությունների հավասարաշափ մակարդակի և այլնի առումով, որոնք, սակայն, այս կամ այն լափով բարելավման կարիք են զգում:

2. «Ռուսումնասիրություններ հայ ճարտարապետության շուրջ» մատենաշարը հրատարակվել է 25 հատորով և 9.600 տպաքանակով: Մատենաշարն ընդգրկում է հայ ճարտարապետության հետ առնչվող խնդիրների ուսումնասիրությունները, որոնք կարևոր են ուսումնասիրողների համար:

3. «Կամար» մատենաշարը հրատարակվել է 3 հատորով և 2.200 տպաքանակով, պարունակում է հայ ժողովրդի պատմական ու հասարակական կյանքի տարբեր շերտերի ուսումնասիրությունները, վերաբերում է կրոնի և ազգության, II համաշխարհային պատերազմից հետո հայերի ներգաղթի հետ կապվող հարցերին և Ղարաբաղի հայությանը (վավերագրեր):

4. «Ժխտված կառույց» մատենաշարը հրատարակվել է 2 հատորով և պարունակում է սփյուռքահայ արվեստին, մշակույթին, կրոնին ու պատմությանը նվիրված համաժողովների արձանագրությունները (տպաքանակ՝ 1.000):

5. «Պատկերներ հայ մշակույթի» մատենաշարից հրատարակվել է 1 հատոր (տպաքանակ՝ 3.000), որն անդրադառնում է հայ գրականության արժեքավորման խնդիրներին (հայերեն և ֆրանսերեն):

6. «Երկինք և երկիր» մատենաշարը հրատարակվել է 2 հատորով (տպաքանակ՝ 4.500), ընդգրկում է Հայկական բարձրամակարդակի մարդաբանական, պատմական և մշակութային նյութերի՝ հայ, ռուս և եվրոպացի լուսանկարիչների արած լուսանկարների հատընտիր հավաքածուն:

7. «Հայ արդի երաժշտություն» մատենաշարը հրատարակվել է 10 հատորով (տպաքանակ՝ 6.500), բովանդակում է հայ երաժիշտների Լրկերը: Առաջին 3 հատորները երկրորդ հրատարակության գործընթացի մեջ են:

8. Ձայնապնակների մատենաշարը (Թողարկվել է 2 ձայնապնակ, 6.000 օրինակ) նվիրված է արդի հայ երաժշտությանը:

9. «Հայկական խոհանոց» գիրքը՝ իտալերեն (տպաքանակ՝ 3.000):

10. «Հայ արդի արվեստ» մատենաշարը: Լույս է տեսել առաջին հատորը (տպաքանակ՝ 1.000):

11. Ջանազան ազգեր և հայտագրեր (տպաքանակ՝ 36.000):

Կան նաև հրատարակության պատրաստվող կամ ծրագրված գրքեր ու մատենաշարեր:

1. Մ. Ղազարյան, Հայկական կարպետ (հայերեն, ռուսերեն և եվրոպական այլևայլ լեզուներով):

2. «Հայկական գորգ»:

3. «Պատկերներ հայ մշակույթի» մատենաշարով՝ № 2, Ֆեյդի, Դոուսթի, Օշականի և ուրիշների «Սասունցի Դավիթ» (հրատարակության պատրաստող՝ Տ. Գուլումշյան), № 3՝ «Ռումինիայի հայ գաղթավայրի պատմությունը» (հեղինակներն են ռումինահայ մտավորականները՝ Բուխարեստի Editura stîntifica și enciclopedică-յի համագործակցությամբ):

4. «Սովետահայ ծաղրանկարիչներ» (4 հատորով):

5. «Կերպարվեստի մատենաշար» (10 հատորով):

6. «Արդի հայ նկարչություն» Հրատարակվել է № 1-ը, պատրաստվում է թողարկման՝ № 2-ը: Հնարավոր է այն շարունակել մինչև № 5-ը:

7. «Դասական հայ նկարչություն» (6 հատոր):

8. «Մատենաշար հայ մանրանկարչության» (15 համար)։

9. «Սովետական Հայաստանի ուղեցույց» (6 շնորհանդես)։

10. «Փարաշանովը և իր գործը» (անգլերեն և ֆրանսերեն)։

11. «Ղարաբաղի գրքի թարգմանական հրատարակությունը (գերմաներեն, ֆրանսերեն և անգլերեն)։

12. «Մատենագիտության մատենաշար»։

13. «Հայկական խոհանոց» (ֆրանսերեն)։

Հրատարակչությունը նյութապես ինքնարավ միավոր է, սակայն նրա ընթացիկ հաշիվները միշտ բաց են, որովհետև կարևոր ուշադրություն է դարձնում արժեքավոր նյութեր ունենալու, բրնազրեթի բարելավման և բարձրորակ արտադրության վրա։ Նրա հրատարակած տարբեր գրքերը և կազմերը շահել են մրցանակներ կամ

առանձնանշվել իբրև շատ գեղեցիկ արդյունքներ։ Բնականաբար, այսպիսի նպատակաուղղվածությունը ավելացնում է հրատարակչության ծախսերը, որոնք հակադրվում են նրանով, որ տեղադրված արդյունքները անընդհատ արտատրվում են հայերի և օտարների կողմից։ Հուսով ենք, որ առաջիկայում ևս նույնը կշարունակվի, և դրանով իսկ կհատուցվեն հրատարակչության նյութական ծախսերի համար գործադրած մեծ ջանքերը։ Օ՛հՄՄԷ հրատարակչությունը իր լույս ընծայած 112.600 գրքերով և 36.000 ազդերով ու 6.000 ձայնապնակներով փորձում է նոր ուղիներ բանալ հայ մշակույթի արժեքների տարածման համար։ Այդ արժեքները գնահատվում են օտարների կողմից, բայց հայկական բարդ իրականության մեջ դեռևս ըստ ամենայնի ճանաչում չեն գտել։

ՀԵՐՄԱՆ ՎԱՀՐԱՄՅԱՆ
(Միլոե)